ԵՐԵՎԱՆԻ Հ. 175 ՄԻՋՆԱԿԱՐԳ  ԴՊՐՈՑ

# ՊԼԱՆ
# 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ  ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ ԱՆ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ  2022

Հաշվետվություն

Երևանի հ. 175 միջնակարգ դպրոցի

2021-2022 ուստարում կատարված

ուսումնադաստիարակչական աշխատանքների

---

Հարգելի գործընկերներ.

Հանրակրթական դպրոցների երեկ կայացած օգոստոսյան ավանդական խորհրդակցությամբ և դպրոցի դպրոցի մանկավարժական խորհրդի այսօվա նիստով մեկնարկում է նոր ուսումնական տարին բոլորովին նոր խոստումներով և նոր պարտավորություններով:

Շնորհավորում եմ բոլորիս սեպտեմբերյան տոնի առիթով, մաղթում բարի ընթացք:

Ձեզ եմ ներկայացնում նախորդ օրվա կայացած օգոստոսյան խորհրդակցությունում քննարկված հարցերը: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանը նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում մեծածավալ աշխատանք է իրականացվելու գալիք ուսումնական տարվանից նոր չափորոշիչների տեղայնացմանը նախապատրաստելու համար:

Այդ նպատակով նախատեսվում են վերապատրաստումներ, բովանդակային քննարկումներ: Նշվեց, որ 2023 թվականի սեպտեմբերից նոր չափորոշիչը տեղայնացվելու է 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում:

Ըստ Ժ. Անդրեասյանի ավագ դպրոցներում ավանդաբար գործող հոսքային ուսուցման մոդելը կփոխարինվի անհատական ուսուցմամբ: Դա նշանակում է, որ փոխվելու է ավագ դասարանների կազմավորման ձևը, չենք ունենալու միանական 10$^{Ա}$ կամ 10$^{Բ}$ դասարան: Օր 10-րդ դասարանում ունենալու ենք տարբեր առարկաների ուսուցմանը մասնակցող տարբեր խմբեր:

Խորհրդակցության ժամանակ անդրադարձ է եղել նոր չափորոշիչով նախատեսված ուսուցչի դրույքի ժամային ծանրաբեռնվածության նվազմանը: Ուսուցչի մեկ դրույքի ծանրաբեռնվածությունը տարրական դասարաններում կսահմանվի շաբաթական 18 ժամ, միջին և ավագ դասարաններում 20 դասաժամ:

Անդրադարձ է եղել կամավոր ատեստավորմանը «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխություններին, մասնավորապես՝ դպրոցների վարչական

աշխատողների դասավանդման առնչվող նոր իրավակարգավորումներին, ուսումնական պլանների և այլ հարցերով:

Ուզում եմ Ձեզ ներկայացնել.

ա) նախորդ ուստարում մեր դպրոցում կատարված աշխատանքները շատ հակիրճ, քանի որ ուսմասվարները դրան անդրադարձել են տարեվերջյան մանկավարժական

խորհրդի նիստում:

բ) կխոսեմ մեր ձեռքբերումների մասին:

գ) կլսենք Ձեր դիտարկումները ոլորտում և մեր դպրոցում առկա խնդիրների վերաբերյալ, որպեսզի փորձենք գտնել այդ խնդիրները լուծելու ուղիները:

Նշենք, որ մեր դպրոցի աշխատանքները 2021-2022 ուստարում կազմակերպվել են Երևանի քաղաքապետարանի և ԿԳՄՍ նախարարի որոշումների, կարգադրությունների, հրամանների և նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

**Ինչ ձեռքբերումներ ենք ունեցել նախորդ ուսումնական տարում**

Կրթության որակի բարձրացման ուղղությամբ դպրոցում տարվել է հետևողական աշխատանք: Նախորդ ուսումնական տարում դասարանների թիվը 30 էր, որից 11-ը տարրական օղակում, 13-ը միջին դպրոցում, 6-ը ավագ դպրոցում: Աշակերտների ընդհանուր թիվը 804 է, սովորողների առաջադիմությունը 99,5% , իսկ ուսման որակը 41 %:

Շրջանավարտների ընդհանուր թիվը 12-րդ դասարանում 46 էր, որից 38 -ը ընդունվել են բուհ:

9-րդ դասարանը ավարտել են 77 աշակերտ, որոնցից մեր դպրոցում ուսումը շարունակում են 52 աշակերտներ, ուսուցիչների թիվը 53 է, վերապատրաստված ուսուցիչները 47-ը:

Չնայած նշված տվյալների կրթության որակը գոհացուցիչ չէ: Ակնկալվող արդյունքին հասնելու, սովորողների կողմից պետական կրթության չափորոշիչով նախատեսված գիտելիքի յուրացումը ապահովելու նպատակով առանձնակի տեղ պետք է հատկացնել ուսուցչի մասնագիտական և մեթոդական վերապատրաստմանը: Շարունակվելու է մեր դպրոցի ուսուցիչների ատեստավորումը: Երեկվա

խորհրդակցությանը խոսք գնաց այդ դասընթացների արդյունավետության բարձրացման մասին:

Հարգելի գործընկերներ մեր դպրոցում ուսումնական պրոցեսը ըստ տարիքային խմբերի սկսվում է նախակրթարանով: Կարծում եմ արդեն 7-րդ տարին գործող այս կառույցը մեր համայնքում իր բարի անունն ունի:

Տնօրենը առանձնացրեց նախակրթարանի դաստիարակների գրագետ և արհեստավարժ աշխատանքը: Այստեղ մեծ տեղ է տրվում երեխայի ինքնուրույնությանը, հոգեկան հարմարվածությանը, դպրոցին նախապատրաստմանն ու սահուն անցմանը:

Տնօրենը անդրադարձավ նախորդ ուստարվա ընթացքում ձեռքբերումներին: Տնօրենը առանձնացրեց տարրական մասնախմբի ուսուցիչների, ծնողների ճիշտ համագործակցությունը: Լսվել են դասաժամեր Ա. Մանուկյանի, Դ. Աղամյանի, Ն. Գրիգորյանի, Օ. Կոնջորյանի, Լ. Հարությունյանի, Հ. Վարդանյանի, Ք. Գևորգյանի, Գ. Եսայանի, Գ. Առաքելյանի մոտ, որոնց արդյունքները քննարկվել են ուսուցիչների հետ: Կազմակերպվել են միջոցառումներ տարբեր թեմաներով: Մասնախումբը գարնան զարթոնքը դիմավորեց «Գարուն, մայրիկ» խորագրով դասարանական անկյունի ձևավորմամբ, կազմակերպվեց բոլոր 4-րդ դասարաններում «Անահիտ» հեքիաթի քննարկումը: Առաջին դասարանները հանդես եկան ամփոփիչ ելույթ-միջոցառումներով, որտեղ ականատես եղանք նրանց գրագետ, կազմակերպված խոսքին և դերասանական խաղին:

Տնօրենը առանձնացրեց և բարձր գնահատանքի արժանացրեց «Հայոց լեզու և գրականություն» մասնախմբի նախորդ ուստարվա արդյունավետ, բազմաբովանդակ աշխատանքը: Մասնախումբ նշեց Սևակի, Թումանյանի ծննդյան տարեդարձը (Գ. Ալավերդյան, Ա. Սարատիկյան): 9-րդ և 11-րդ դասարանցիների մասնակցությամբ (Ռ. Ստեփանյան) նշվեց մայրենիի, գիրք նվիրելու օրը, մասնակցեցին «Ոստիկանը իմ պատկերացմամբ», «Իմ Կապուտիկյան» շարադրության մրցույթներին և արժանացան պարգևների: Կոլեկտիվ դասալսումների ժամանակ 6-րդ դասարաններում (Ս. Իսրայելյան, Լ. Պողոսյան) երեխաները, դասալսողները լսեցին Մ. Մաշտոցի և Ս. Պարթևի, Կոմիտասի և Թումանյանի երկխոսությունները:

Մեր դպրոցի «Օտար լեզվի» մասնախմբի նախորդ ուստարում ունեցած ամենամեծ ձեռքբերումը 10-րդ դասարանի աշակերտ Տ. Իսրայելյանի հաղթանակն էր հանրապետական օլիմպիադայում: Տիգրանը հաղթող է ճանաչվել նաև «ֆրանսիական աքաղաղ» մրցաշարում արժանանալով առաջին կարգի մցանակի:

Օտար լեզուների կարևորությունը շեշտելով, առանձնացվեց մայրենի լեզվին գրագետ, վարժ տիրապետելու հրամայականը, մայրենիի նկատմամբ դարերիցեկող մեր ժողովրդի , հայ մայրերի սերնդից սերունդ այն փոխանցելու ավանդույթը: Երբեք չմոռանաք, որ յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի դեմքն է տրված դաստիարակության կրողը, ես կավելացնեի հարգելի ուսուցիչ նա քո գիտելիքների, հնարավորությունների արդյունքն ՝ և ամենակարևորը քո՝ ուսուցչի հեղինակության կրողը:

Խոսքս նպատակ ու պահանջ ունի՝ դասարան մտնել նախապատրաստված զննական, դիդակտիկ պարագաներով լրացուցիչ տեղեկություններով և երբեք չմոռանալ ինքնակրթության մասին: Այսօր ծնողը պահանջատեր է, ուզում է իր երեխային դասավանդի ուժեղ , բանիմաց, գրագետ մանկավարժը, որի մասին և բարձրաձայնում է: Ծնողից սովորելու բան ունենք նաև մենք: Պետք է Ձեր պահանջները կարողանաք ճիշտ ներկայացնել և հետևողական լինեք, որ կատարվեն դրանք, աշակերտը դպրոց գա ժամանակին, չուշանա, մաքուր կոկիկ հագնվի, դասագրքերն ու տետրերը կազմված, դասին պատրաստ: Ծնողական ժողովները կազմակերպեք բոլոր ծնողների մասնակցությամբ, հստակ օրակարգով, մասնագիտորեն ծնողի ուշադրությունը հրավիրեք երեխայի տարիքայինառանձնահատկություններին, դրա հետ կապված նրանց բնավորության փոփոխություններին, շատ նրբորեն անդրադարձեք նաև իրենց՝ ծնողների ինքնակրթությանը:

«Պատմության» մասնախմբի աշխատանքները ևս հագեցած են եղել հատկապես մշակութային, պատմական նշանակության կենտրոնների այցելություններով: Այս մասնախմբի աշխատանքներում մեծ տեղ է տրվել հայ ժողովրդի ազգային ակունքներին կապող միջոցառումներին՝ «Բարեկենդանին», «Զատկին» նվիրված միջոցառումներով: Իսկ Հայոց բանակի 30 ամյակին նվիրված, Անդրանիկ Օզանյանի ծննդյան օրվան, հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառումները, Ցեղասպանության թանգարան, Ծիծեռնակաբերդ այցելությունները երեխաների հայրենասիրական դաստիարակության լավագույն օրինակներն են:

«Բնագիտամաթեմատիկա» մասնախումբը իր աշխատանքները կառուցել է մրցույթ-վիկտորինաների, կոնֆերանսների, հետազոտական աշխատանքների կազմակերպման միջոցով: Տնօրինության կողմից տրված գրավոր աշխատանքները մաթեմատիկայից բոլոր քննական դասարաններում՝ 4-րդ, 9-րդ, 12-րդ, ստուգվել են, արդյունքները ամփոփվել, առավելություններն ու բացթողումները վեր հանվել:

«Տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա…» մասնախումբը գործել է ակտիվ աշակերտների մեծաթիվ ընդգրկմամբ: «Սպորտլանդիայի» համայնքային փուլում մեր

դպրոցը հաղթող է ճանաչվել և համայնքը ներկայացրել հաջորդ՝ քաղաքային փուլում՝ գրավելով 3-րդ տեղը: Իսկ ֆուտբոլի թիմը դարձյալ Երևան քաղաքի մրցաշարում գրավել է 2-րդ տեղը:

«Ազգային երգ-պար» դասավանդող Գ. Մելքոնյանը 5-7-րդ դասարաններում դասավանդվող այս առարկայի տարեվերջյան հաշվետու ելույթով ներկայացրեց առարկայի կարևորությունը, աշակերտների սերը և հետաքրքրությունը ազգային մշակույթի, երգի ու պարի նկատմամբ: Համադպրոցական միջոցառում կազմակերպվեց նաև պարի միջազգային օրվա առթիվ: Տնօրենը նշեց, որ այս մասնախմբի անելիքները շատ են «Կերպարվեստ», «Երաժշտություն», «ՆԶՊ» առարկաներից:

Տնօրենը խոսեց նաև առարկայական ծրագրով, թեմատիկ պլանների մասին, որի հիմքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված 2022-2023 թ. ուսպլանն է:

Ներկայացվեց օրինակելի ուսպլանով նախատեսված դպրոցական բաղադրիչ ժամերի բաշխումը, որը նախապես քննարկվել է մ/մ- ում նշվեց, որ I դասարաններում դպրոցական բաղադրիչ չի նախատեսված:

Տնօրենը ներկայացրեց նոր ուսումնական տարում կազմակերպվող աշխատանքային ծրագիրը:

2022- 2023 ուստարում ուսումնադաստիարակչական

աշխատանքները պլանավորել հետևյալ կերպ

---

Կազմակերպչական հարցեր

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը իր աշխատանքային գործունեության հիմքում դնելով վերակառուցվող հանրապետության սոցիալ- տնտեսական խնդիրները, նոր ուսումնական պլանից բխող դպրոցին վերաբերվող պրոբլեմները իր աշխատանքները ուղղում է հետևյալ նպատակների իրագործմանը.

| | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Պատ. անձը | Կատարող անձը |
|---|---|---|---|---|
| 1. | Ստեղծել դպրոցահասակ երե-ի հաշվառման դասագրքերի բաժանորդագրման հանձնաժողով | ապրիլ հունիս | տնօրեն | հանձ. նախ. ուսմասվար |
| 2. | Կոմպլեկտավորել դաս – ը, մասնավորապես 10-12 –րդ, ելնելով նոր ու. պլանից | հունիս օգոստոս | տնօրեն | ուսմասվար |
| 3. | Ընտրել հոգաբարձուների խորհուրդ | օգոստոս սեպտեմբեր | տնօրեն | դասղեկներ |
| 4. | Ստեղծել ֆիզ. պատրաստ. մշտականվերահսկող | օգոստոս սեպտեմբեր | տնօրեն | կազմակերպիչ ուսմասվար |
| 5. | Կազմակերպել տնօրենին կից խորհրդ. | սեպտեմբեր | տնօրեն | մ/մ նախ. |
| 6. | Հայտնաբերել ծնողազուրկ, անբարենպաստ ընտանիքների երեխաներին և օգնել նրանց բոլոր կարիքներում: | տարվա ընթացքում | տնօրեն կազմակերպիչ | դասղեկ-դասվար |
| 7. | Հիվանդ, տնային պայմաններում պարապմունքի կարիք ունեցող երեխաներին հայտնաբերել և օգնություն կազմակերպել | տարվա ընթացքում | դասղեկ | տնօրեն կազմակերպիչ |
| 8. | Հայտնաբերել դժվար դաստիարակվող և հոգեբանա- ման- ան ախտորոշիչ միջոցառումներ կազմակերպել | ուստարվա ընթացքում | կազմակերպիչ | դասղեկներ |

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Մանկ. կոլեկտիվի հիմնական աշխատանքային գործունեությունը նպատակաուղղել աշակերտներին խորը և կայուն գիտելիքներ տալուն, բարելավել ուսման և դաստիարակչական խնդիրների իրագործումը

| | Աշխատանքի բովանդակությունը | Ժամկետը | Պատ. անձը | Կատարող անձը |
|---|---|---|---|---|
| 1. | Հաճախակի անդրադառնալ կառավարության քաղ-ության միջազգային իրադրությանը | տարվա ընթացքում | ուսմասվար | մանկ. կոլեկտիվ |
| 2. | Ուսման տնթացքում մեծ ուշադրություն դարձնել աշ-ի դիալեկտիկական մտածելակերպի զարգաց-ման վրա և աշ-ին զինել ստեղ- ն, փորձ-ն, աշ-ը կատարելու հմտությամբ, բն-ն և հասարակ-ն մեջ տեղի ունեցող երևույթների և օրինաչափու-ների հետևությունների և ընդհանրացում-ներ կատարելու կարողությամբ | ուստարվա ընթացքում | ուսմասվար առարկայական ուսուցիչներ | |
| 3. | Դպրոցում հաճախակի կազմակեպել առարկայական տասնօրյակներ, հանդիպումներ | ուստարվա ընթացքում | ուսմասվար մ/մ նախ. | |
| 4. | Հետևել ուսուցիչների ինքնակրթությանը, առաջավոր մանկավարժական փորձի տարածմանը | ուստարվա ընթացքում | տնօրեն ուսմասվար մ/մ նախ. | |
| 5. | Կիսամյակը մեկ անգամ անցկացնել ստ. աշխ. անձամբ տնօրենի մասնակցությամբ՝ h. լեզու, մաթ., ֆիզիկա, քիմիա, օտար լեզու: | ուստարվա ընթացքում | տնօրեն ուսմասվար | |
| 6. | 4-րդ դաս-ում ուս. տարվա վերջում, 5-րդ դաս-ում ուս. տարվա սկզբում կազմակերպել գիտելիքների ստուգում բոլոր առարկաներից | ապրիլ մայիս | տնօրեն ուսմասվար | |

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Առանձին առարկաների նկատմամբ հակում զարգացնելու, մասնագիտական կողմնորոշումը հստակեցնելու նպատակով, հատկապես 9-12-րդ դաս-ում կազմակերպել նպատակային | | |
| 8. | էքսկուրսիաներ և հանդիպումներ Լաբորատոր և գործնականաշխ-ի կատարման ստուգումը, վերլուծու-թյունը և ամփոփումը, կիսամյակը մեկ անգամ կատարել մ/մ նախ-ի միջոցով և դրանց վերահսկողու-թյունը դնել նրանց վրա Անցկացնել ամիսը երկու անգամ | ուստարվա ընթացքում | մ/մ նախ. ուսմասվար |
| 9. | տնօրենին կից խորհր. ուր քննարկել կատարած աշխ-ի արդյունքները, որոշակի հրահանգներ, հանձնարարական-ներ տալ 15 օրվա համար | ուստարվա ընթացքում | տնօրեն ուսմասվար կազմակերպիչ |
| 10 | Յուրաքանչյուր կիսամյակ իմի բերել դասամատյանների վարման հարցերը, ուս. ծրագրերի իրագործումը, լսած դասերի արդյունքները | ուստարվա ընթացքում | տնօրեն ուսմասվար մ/մ նախ. |
| 11 | Ուսուցիչների ամենօրյա աշխ-ի հսկման նպատակով ուշադրություն դարձնել դասալսումներին: Տնօրենին կից խորհրդում հաճախակի լսել ուսմասվարների կատարած դասալսումների մասին ինֆորմացիաներ: | ուստարվա ընթացքում | տնօրեն |
| 12 | Արիկոմին կից պարտադրական խորհրդ. աշխ-ը նպատակաուղղել ներդպրոցական վերահսկողության լծակներն ուժեղացնելուն, նրանում հաճախակի լսել առանձին առար- | ուստարվա ընթացքում | արի.նախ .տնօրեն |

| | | | |
|---|---|---|---|
| | կաների դասավանդման դրվածքի ուսումնասիրման և դպ-ի տնօրինության առանձին անձերի հաշվետվություն | | |
| 13 | Երիտասարդ և նոր ծրագրերով աշխատող ուսուցիչների մոտ հաճախակի դաս լսել և կազմակերպել մեթոդական. ան օգուն | ուստարվա ընթացքում | ումասվար մ/մ նախ. |
| 14 | Մ/մ նիստերում հաճախակի անդրադառնալ նոր ծրագրերով դասավանդող առարկաների արդյունավետության բարձրացմանը: | ուստարվա ընթացքում | ումասվար մ/մ նախ. |
| 15 | Նոր դասագրքերի վերաբերյալ կազմակերպել բանավեճեր 1- դասարանից սկսած դաս-ում կազմակերպել ստուգ. աշխ-ը, հիմնական նպատակը դարձնելով ռեալ առաջադիմության որակի, դրանց արդյունքների վերաբերյալ կատարել մանրամասն վերլուծություն: | ուստարվա ընթացքում | տնօրեն ումասվարներ |
| 16 | Կազմակերպել առաջավոր փորձի ուսումնասիրում և ներդպրոցական տարածում | ուստարվա ընթացքում | ումասվարներ |
| 17 | Օգնության նպատակով դասալսումներ կատարել երիտասարդ և սկսնակ ուսուց-ի մոտ | ուստարվա ընթացքում | տնօրեն ումասվարներ մ/մ նախ. |
| 18 | Յուրաք. ամսվա վերջում լսել ինֆորմ. ումասվարների դասա-ի մասին, ուշադրություն դարձնել գրադարանի աշխ-ի վերահսկմանը | ուստարվա ընթացքում | տնօրեն |

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ուսուցիչներին համախակի ծանոթաց-նել Հ. Հ. կրթ-ն և գիտ-ն նախար-ն, կրթ-ն վարչ-ն հրամաններին, գերագույն խորհուրդի համապատասխան հանձնաժողովի որոշումներին: | | |
| 2. | Կազմակերպել խորհր. ուսուցիչների գիտելիքի հարստացման նպատակով ընտրված թեմաների շուրջը դասղեկների սեմինարները: | սեպտեմբեր հունվար | տնօրեն |
| 3. | Հաստատել դասղեկների և մ/մ նախ. ումասվարների պլանները: | 25.09 | ումասվար կազմակերպիչ |
| 4. | Քննարկել առանձին առարկաների նոր ծրագրերը և դրանց համապատասխան փոփոխությունները: | 10.10 | տնօրեն ումասվար մ/մ նախ. |
| 5. | Գրադարանում և ուսուցչանոցում ունենալ ,,խորհուրդ ենք տալիս ընթերցել"ցուցափեղկը, որտեղ տեղ տալ նորույթյուններին, մեթոդա-մանկավարժական առաջավոր փորձին: | ուստարվա ընթացքում | գրադար. ումասվարներ կազմակերպիչ |
| 6. | Ուսուցչական կոլեկտիվին համախակի տեղյակ պահել ուսցիչների ատեստավորման և որակավորման հանձնաժողովի աշխ-ը: | ուստարվա ընթացքում | տնօրեն |

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ <u>ԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ</u>

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ուս տարվա սկզբին ստեղծել ծնողական համայնքի կոմիտե, կատարել աշխ-ի բաժանում ծնող-ն համայնքի ակտիվ անդամների միջև: | սեպտեմբեր | տնօրեն կազմակերպիչ |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Ծնողական համայնքի միջոցով պարզել ծնողազուրկ երեխա-ների և նրանց շրջապատել հոգատարությամբ, կազմակեր-պելով համապատասխան նյութական և բարեգործական օգնություն: | հոկտեմբեր | կազմակերպիչ ծնող կոմիտե դասղեկներ |
| 3. | Դասղեկների միջոցով սեպտեմբերի վերջում պարզել աշնանային առա-ջադրանք ստացած և երկտարեցի աշա-ի հաճախման և առաջադիմության վիճակը: | սեպտեմբեր հոկտեմբեր | դասղեկներ կազմակերպիչ |
| 4. | Հաճախակի ստուգել աշակերտների միություններիշը,Քննական առարկա դարձնել առանձին դասարանների առաջադիմությունը, հաճախումները, դասղեկների հաշվետվությունները, որոնցում մասնակից դարձնելով ծնողա-կան ակտիվին: | ուստարվա ընթացքում | կազմակերպիչ աշ-ի միջոցով |
| 5. | Ու. կարվա ընթացքում հաճախակի լսել առանձին դասարաններում ծնող կոմիտեների հաշվետվությունը: | ուստարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |
| 6. | Ծնող կոմիտեում քննարկման առարկա դարձնել մասնագիտական կողմնորոշման և ավագ դպրոցում ուսուցումը շարունակելու հարցը: | մարտ ապրիլ | դասղեկներ կազմակերպիչ |
| 7. | Ընտրել դպրոցի խորհուրդ և մշակել սեփական կանոնադրությունը: | հոկտեմբեր | դասղեկներ ջոկատավար |
| 8. | Ընտրել հոգեբարձուների խորհուրդ կազմել համատեղ գործունության պլան-ծրագիր և կատարել աշխ-ի բաժանում: | օգոստոս սեպտեմբեր | տնօրեն կազմակերպիչ ծնող. կոմիտե |

## ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ավագ դպրոցի 10-րդ դաս-ի դասղեկի ժամերին քննարկել մեր հանրապետությունում կատարված փոփոխությունները: | ուստարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |
| 2. | Կազմակերպել թեմատիկ էքսկուրսիաներ ,,Հայրենի աշխարհ' թեմայով: | ուստարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |
| 3. | Կազմակերպել մանկական ստեղծագործությունների ցուցահանդես,, Մեր առօրյան" թեմայով: | ուստարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |
| 4. | Հայտարարել ,,Իմ հայրենիքը" թեմայով լավագույն շարադրություն մրցանակա-բաշխություն: | | |
| 5. | Ավագ դպրոցի աշակերտների միջոցով կազմակերպել ազգային ազատագրական շարժումը մեկնաբանող բանավեճեր՝ բացահայտել դրանց նպատակները և խնդիրները: | ուստարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |
| 6. | Արտադասարանական աշխատանքների ընթացքում հաճախակի անդրադառնալ հայ հերոսամարտին, հերոսների կյանքին և գործունեությանը, ստեղծել համապատասխան ցուցափեղկ: | | |
| 7. | Կազմակերպել հանդիպումներ ,,Աշակերտների վարքագիծը և մեր ժամանակակցի կեպարը", ,,Մարդն աշխատանքով է գեղեցիկ ", ,,Մեր օրենքը " թեմաներով: | | |
| 8. | Կազմակերպել բանավեճեր ,, Ինչ է երջանկությունը",, Ինչպես եմ պատկերացնում մտերմությունը և ընկերությունը"թեմայով: | | |
| 9. | Աշակերտական միությունների համար մշակել առանձին գործունեության պլաններ արդիական խնդիրներին համապատասխան: | սեպտեմբեր հոկտեմբեր | կազմակերպիչ |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Մշակել ազգային տոների համապատասխան օրացույց և հետևել դրանց կենսագործմանը | սեպտեմբեր | տնօրեն<br>կազմակերպիչ |
| 11 | Կազմակեպել մարզական մրցույթներ<br>ա) շաշկու, շախմատի<br>բ) վոլեյբոլի, բասկետբոլի<br>գ) ֆուտբոլի<br>դ) թեթև ատլետիկա | հոկտեմբեր<br>ապրիլ | կազմակերպիչ<br>դասղեկներ<br>ֆիզկուլ. ուս. |

## <u>ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u>

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Դաստիարակության այս ուղղությունը նպատակային և արդյունավետ դարձնելու համար<br>ա)վերանայել ՆԶՊ դասերի բովանդա-կությունը և ուղղվածությունը<br>բ)կազմակերպել հրաձգության մրցույթներ<br>գ)ծանոթանալ հայ զինվորների կյանքին,ստեղծագործական ուղուն և ռազմավարական արվեստի նրանց գործերին: | նոյեմբեր<br>ուս. տարվա ընթացքում | տնօրեն<br>զին. ղեկ.<br>ուսմասվար<br>զին. ղեկ.<br>դասղեկներ |
| 2. | Անցկացնել թեմատիկ երեկոներ, ցերեկույթներ<br>ա)նվիրված ազգային ազատագրական շարժումներին<br>բ)Ֆիդայիների կյանքին և նրանց գործունեությունըդրանց նպատակներին և խնդիրներին: | ուս.տարվա ընթացքում | կազմակերպիչ<br>պատմ. ըւս. |
| 3. | Անդրադառնալ ազգային զինված ուժերի կառուցվածքին | ըւս.տարվա ընթացքում | զին. ղեկ. |
| 4. | Կազմակերպել բանավեճեր ,, Ազգային զինված ուժերը" դրանց դերը հանրապետության անկախունը ապահովելու հար-ցում"թեմայով: | ուստարվա ընթացքում | զին. ղեկ.<br>հ. լ. և գրակ. ուսուցիչներ |
| 5. | Հայրենիքին ծառայել և նրա պաշտպանությունըհզորացնել յուր. հայ մարդու պարտքն է ,, նշանաբան դարձնել յուր. պատանու մտածելակերպը: | ուս.տարվա ընթացքում | զին. ղեկ.<br>դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Կազմակերպել նեղպրոցական մարզա-կան շաբաթներ | հոկտեմբեր մայիս | կազմակերպիչ ֆիզ. ուսուց. |
| 7. | Մեր հանրապետության առաջատար մարզիկների նվաճումները մեկնաբանող ցուցափեղկ պատրաստել | հունվար | կազմակերպիչ |
| 8. | Ազգային հարցերի ցուցադրական մըր-ցույթ ստուգատեսներ նախապատրաստել և կազմակերպել | մայիս | կազմակերպիչ ֆիզ. ուսուց. |

## ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | ,, Կրոնը և բարոյականությունը" ,, Կրոնը և գիտությունը" թեմաներով զրույցներ կազմակերպել տարբեր դասա-րաններում | ուս.տարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |
| 2. | Աստվածաշնչի մասին ծանոթացնել բարձր դասարանցիներին, նշելով նրա դերը և նշանակությունը | ուս.տարվա ընթացքում | դասղեկներ պատմ. ուսուց. |
| 3 | ,,.Հայաստանը և նրա հարակից երկրները, դրանցում տարածված կրոնները" թեմաներով զրույց դասախոսություն կազմակերպել | փետրվար | կազմակերպիչ դասղեկներ պատմ. մ/մ |
| 4. | Աշակերտներին ծանոթացնել հայ միջնադարյան կիրառական արհեստներին, արվեստին դրանց ակնառու ներկայացուցիչ-ներին, հիմնական ուշադրու-թյունը դարձնելով հոգևոր խնդրին | ուս.տարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՆՐՕԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ: ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

1. Դպրոցում աշխ. ուս. դասերին շարունակել և խորացնել ազգային արհեստների ուսումնասիրությունը, այն հասցնել այն մակարդակի, որ աշակերտները կարողանան ինքնուրույն ամբողջական արժեքներ ստեղծեն:

2. Կազմակերպել աշխ.ուս. ուսուցիչների և աշակերտների ուժերով դպրոցական գույքի վե-րանորոգում, դիտողական պարագաների պատրաստումը:

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Հանձնարարել 9-12-րդ դասարանների դասղեկներին ուսումնասիրելու աշակերտների մաս-նագիտական հակումների գրույցները կազմակերպել ծնողների հետ: | ուս տարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկ |
| 4. | Կազմակերպել աշակերտական գիտագործնական համաժողով ,,Բոլոր մասնագիտությունները լավ են, բայց իմ ընտրածն առավել է" թեմայով նրանում մեծ տեղ տալ ազգային կիրառական արհեստներին: | հունվար | կազմակերպիչ դասղեկ |

## ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Բացի Ծրագրային էքսկուրսիաներից, գրողների, երգահանների, նկարիչների հետ հանդիպումներ կազմակերպել: դպրո-ցում գործող գեղարվեստական խմբակների ուժերով կազմակերպել օլիմպիադաներ,գեղարվեստական ստուգա-տեսներ | ուս տարվա ընթացքում | կազմակերպիչ ի.լ. ուսուց.մ/մ |
| 2. | 5-9-րդ դասարաններում կազմակերպել զրույց - դասախոսություններ ,,Արվեստի օրենքը ճշմարտություն է" Գեղարվեսական գրականու-թյունը կյանքի աղբյուր է'' ,, Իմ հայրենիքը և մայրաքաղաքի գեղեցիկ վարդերը'' թեմայով | ուս տարվա ընթացքում | կազմակերպիչ դասղեկներ |
| 3. | 10-12-րդ դաս-ի համար ,, Արվեստի ինչպիսի գործերն են դարեր ապրում", ,,Գեղեցիկ տղայի և աղջկա հարաբերու-թյուններ" ու ,,Նկարիչ ար-վեստագետն իր ժամանակաշրջանի զավակն է ": | | |
| 4. | Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի ճարտարապետ-տական կոթողներընդգրկող տարածքներ | ուս տարվա ընթացքում | դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 5. | Դպրոցում ունենալ մշտական գործող ցուցահանդեսներ ա)նկարում են մեր աշակետները բ)պատրաստում են մեր աշակերտները | | |
| 6. | Աշակերտների գեղագիտական զարգացման և բարձրացմանխնդիրները ևս դարձնել տնօրինության մտահոգության առարկա | ուս տարվա ընթացքում | տնօրեն |

### ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՊՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԱՇԱԿՐԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Մշակել աշակերտական միությունների կանոնադրություն, կառուցվածքը և սահմանել գործունեության ոլորտները | սեպտեմբեր հոկտեմբեր | կազմակերպիչ |
| 2. | Հաճախակի կազմակերպել աշակետական միու-թյուններիհավաքներ, մասնակից դարձնելով ուսուցիչներին և դասղեկներին: | ուս տարվա ընթացքում | |
| 3. | Կազմակերպել աշակերտական միությունների ակտիվուսուցումը՝ հրավիրել սեմինարներ | | |
| 4. | Ուժեղացնել աշակերտական միությունների ինքնավստահությունը,ստեղծելով որոշակի հանձնաժողովներով՝ ա)ուսումնական և դաստիարակչական բ)գաղափարական գ)ռազմահայրենասիրական դ)սանիտարատնտեսական | | |
| 5. | Սկաուտական շարժման խնդիրները դարձնել աշակետական միությունների աշխատանքների կազմակերպման հիմքը: | ուս տարվա ընթացքում | կազմակերպիչ ջոկատավար |

### ԱՇԽԱՏԱՆՔԸ ԸՍՏ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ծնողական համայնքի աշխատանքին մասնակից դարձնել դասղեկներին և նրանց համատղ ջանքերով ընտրել համայնքի ակտիվին: Երկու ամիսը մեկ կազմակերպել ծնողական համայնքի հավաքներ: | ուս տարվա ընթացքում | տնօրեն կազմակերպիչ |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Աշխատանքի ընթացքում որպես ազգային բնութագրիչ բարօրություն ստեղծման միջոցով:<br>ա)ծնողական անձնական օրինակը ընտանիքում<br>բ)աշակերտների ամառային հանգստի և ռեժիմի ճիշտ կազմակեպումը<br>գ)փողոցային երթևեկության կանոների վերաբերյալ զրույցների կազմակերպումը: | | |
| 3. | Ամիսը մեկ անգամ կազմակեպել ծնողների հանդիպման օր | ուս տարվա ընթացքում | տնօրեն կազմակերպիչ |
| 4. | Ստեղծել անկյուն ,,Ձեզ համար ծնողներ" | մինչև սեպտեմբեր | կազմակերպիչ |
| 5. | Ծնողների համար կազմակերպել ,,ծնողական գիտելիքների համալսարանի պարապմունքներ<br>ա) ծնողների դերը մասնագի-տական կողմնորոշման հարցում<br>բ) ընդունելություններ, կարողություններ, ժառանգություններ<br>գ) ինչպես օգնել աշակերտին դասագրքերը պահպանելու և գործելու հարցում<br>դ)հիվանդ երեխաների ճիշտ ախտորոշումը և օգնության կազմակերպումը տանը և դպրոցում<br>ե)Հասարակության դերը երեխաների դաստիարակության գործում | | |
| 6. | Առանձին աշխատանքներ կազմակերպել անբարենպաստ ընտանիքի ծնողների հետ, նրանց երեխաներին պահելով ծնողական համայնքի և ուսուցիչ-ների ուշադրության կենտրոնում: | ուս տարվա ընթացքում | կազմակերպիչ ծնող. կոմ. |
| 7. | Լավագույն ընտանիքների դաստիարակչական փորձը տարածելունպատակով կազմակերպել բանավեճեր և ընտանեկան ավանդույթների մասին զրույցներ կազմակերպել,որոնքկվարեն հենց ծնողները | դեկտեմբեր | դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Հայ ավանդական ընտանիքի հեղինակության վերականգնումը և դրա ճանաչումը նոր սերնդի կողմից թեմայով զրույց | մայիս | տնօրեն կազմակերպիչ դասղեկներ |

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Դասղեկների աշխատանքը կոորդինացված և հետևողական դարձնելու նպատակով կազմակեպել սեմինարներ<br>ա)դասղեկների աշխատանքների անցած տարվա վերլուծություն և նոր ու.տարվա խնդիրների առաջ քաշում<br>բ)Հայ մանկավարժական դպրոցում ավանդույթների ինքնատիպության պահպանման և տարածման մասին<br>գ)դասագրքերի պահպանումը և գրքերի հետ վարվելու էթիկան<br>դ)աշակերտների ֆիզիկական դաստիարակու թյունը և դասղեկների անելիքները:<br>ե)մասնագիտական կողմնորոշումը և աշխատան-քային դաստիարակությունը աշխատանքի նախապատրաստումը որպես դասղեկների և ծնողների համատեղ աշխատանքի հիմնական խնդիրը | | |
| 2. | Դպրոցում սահմանել լավագույն դասարանի և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման մրցույթ | հոկտեմբեր | կազմակերպիչ |

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ելնելով նախահաշվի ընձեռած հնարավորու-թյունից ձեռնամուխ լինել տանիքի ընթացիկ վերանորոգմանը | օգոստոս սեպտեմբեր | տնօրեն տնտեսվար |
| 2. | Սան հանգույցի վերանորոգում | հունիս օգոստոս | տնօրեն տնտեսվար |
| 3. | Միջանցքների սպիտակեցում և պատերի յուղաներկի վերանորոգում | օգոստոս դեկտեմբեր | տնօրեն տնտեսվար |
| 4. | պոկված մանրահատակի վերանորոգում | օգոստոս հոկտեմբեր | տնօրեն տնտեսվար |
| 5. | Վերանորոգել նստարանները | տարվա ընթացքում | տնտեսվար |
| 6. | Մաքրող սան հիգենիկ նյութերի ձեռք բերում | | |
| 7. | Ֆինանսական միջոցների հայթայթում տարրական օղակի մասնաշենքի միջանցքների, ինչպես նաև տանիքի նորոգման համար | տարվա ընթացքում | տնօրեն տնտեսվար հաշվապահ հոգեբարձուների խորհուրդ |